


ՎՐԵՋ-ԱՐՄԵՆԻ «ԻՄ ՈՒՂԵՂԱՏՈՒՄԸ»

Posted on November 30, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



«Իմ Ուղեպատումը» Հեղինակ՝ Վրեժ-Արմեն

«Մեր ետեւ մնաց Հին աշխարհը:

Պայծառ երկինք մըն է: Լոյսը կ'ընկերանայ մեզի: Վարը, ցիր ու ցան ամպերուն մէջէն Ատլանտեանի կապոյտն է, որ մերթ ընդ մերթ կը դիտեմ՝ կարծես կողմսորոշուելու համար պարզապէս:



Տակաւին երկա՛ր ժամեր կան մեր առջեւ, ժամեր՝ վերոյիջելու համար այն ամենը, որ ձգեցինք Հին աշխարհին:

Գահիրէ՛՝ Տահեր թաղամասի մեր բնակարանը, ուր անցաւ մանկութիւնս ու վաղ պատանեկութիւնս: Մեր տունէն ո՛չ շատ հեռու՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որուն սուրբերը հայու աչքեր ունէին: Թաղը՝ հանրակառքի ճոնչիւններով ու շրջիկ վաճառորդներու անվերջ կանչերով:

Դպրո՛ցս՝ Գալուստեան ազգային վարժարանը, որուն պատերէն հայութիւն կը ծորեր մեր հոգիներուն մէջ, եւ ուր անցան կեանքիս ամենէն կարեւոր տարիները: «Յուսաբեր»ը՝ շէնքը, թե՛րթը մանաւանդ, որ իր հմայքին տակ առաւ զիս: Հայկական միւս ակումբները, միւս դպրոցները, այլ կալուածները: Առաջնորդարանը՝ եկեղեցիին կողքին: Միւս եկեղեցիները:»

«Իմ Ուղեպատումը» Հեղինակ՝ Վրեժ-Արմեն

«Մեր ետեւ մնաց Հին աշխարհը:

Պայծառ երկինք մըն է: Լոյսը կ'ընկերանայ մեզի: Վարը, ցիր ու ցան ամպերուն մէջէն Ատլանտեանի կապոյտն է, որ մերթ ընդ մերթ կը դիտեմ՝ կարծես կողմսորոշուելու համար պարզապէս:



Տակաւին երկա՛ր ժամեր կան մեր առջեւ, ժամեր՝ վերոյիջելու համար այն ամենը, որ ձգեցինք Հին աշխարհին:

Գահիրէ՛՝ Տահեր թաղամասի մեր բնակարանը, ուր անցաւ մանկութիւնս ու վաղ պատանեկութիւնս: Մեր տունէն ո՛չ շատ հեռու՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որուն սուրբերը հայու աչքեր ունէին: Թաղը՝ հանրակառքի ճոնչիւններով ու շրջիկ վաճառորդներու անվերջ կանչերով:

Դպրո՛ցս՝ Գալուստեան ազգային վարժարանը, որուն պատերէն հայութիւն կը ծորեր մեր հոգիներուն մէջ, եւ ուր անցան կեանքիս ամենէն կարեւոր տարիները: «Յուսաբեր»ը՝ շէնքը, թե՛րթը մանաւանդ, որ իր հմայքին տակ առաւ զիս: Հայկական միւս ակումբները, միւս դպրոցները, այլ կալուածները: Առաջնորդարանը՝ եկեղեցիին կողքին: Միւս եկեղեցիները:»

Այսպես կը սկսի այս հատորը, որ իւրայատուկ ձեւով կը ներկայացնէ Վրեժ-Արմենի անցած ուղին՝ 20-րդ դարու կեսերէն մինչեւ մեր օրերը: Անոր յուշերուն ընդմէջէն, Եգիպտոսէն Գանատա, ընթերցողը մասնակից կը դառնայ մեր ազգային կեանքի տարբեր իրադարձութիւններուն, որոնց ականատեսը եւ յաճախ դերակատարը հանդիսացած է գրողը ինքը, անոնք առնչուած ըլլան մեր կրթարաններուն, կազմակերպութիւններուն թէ մամուլին, կամ հայրենիքի հետ կապերուն, այլեւ հաղորդակիցը կը դառնայ այն ոգին, որ այդ բոլորին ճամբով փոխանցուած է գրողին ու իր սերունդին սերունդին:

Աղբիւրները չեն պակասած այդ բոլորը վերյիշելու եւ իրարու քով բերելով հետաքրքրական պատումի մը վերածելու համար: «*Բարեբախտաբար այն մեծ սնտուկը, որ մեզմէ առաջ ճամբայ էր ելած արդէն, ոչ միայն մեր կահ-կարասին ու հագուստ-կապուստը կը փոխադրէր, այլեւ մեր հազարաւոր գրքերուն հետ նաեւ մեր թուղթերը՝ շարադրութեան տեստրակներէս, նամակներէս, օրատեստրէս սկսեալ մինչեւ հրատարակուած յօդուածներս, լուսանկարներու մի քանի տասնեակ ալպոմները, որոնք մայրս կազմած էր տարիներու ընթացքին, ինչպէս նաեւ իր ալ օրատեստրէրն ու նամակակնին: Այս թռիչքը ըրած պահուս, դեռ չէի գիտեր ե՞րբ պիտի գար առիթը օգտուելու այդ բոլորէն ու գրելու:*» կը կարդանք գրքին ներածականին մէջ: Օգտագործուած է նոյնպէս հեղինակին շուրջ կէս դարու արխիւը՝ հաւաքուած Գանատայի՛ մէջ:

Վրեժ-Արմենի կեանքի ուղին կը զուգահիշի Եգիպտոսի հայ գաղութի բարձրակետին, այլեւ կծկումի սկզբնաւորութեան, ապա Գանատայի, յատկապէս Մոնթրէալի հայ գաղութի կերտման ու զարգացման տարիներուն:

Յակոբ Խաչիկեան կը վկայէ. «*Իմ ուղեպատումը*» վառ գոյներով ներկայացուած ինքնաճանաչման ուղի մըն է: *Չայն կարդալով նախ եւ առաջ կը ծանօթանանք գրողին ընտանիքին ու իր երիտասարդ օրերու ինքնութեանը, այնքան մօտէն՝ ինչպէս կերպարներու կը ծանօթանանք գրականութեան մէջ... Այս քնարական ու ճարտարահիւս յուշագրութիւնը երեւան կը բերէ աշխարհ մը՝ մտաւորականներու եւ գրական հսկաներու փարթամ ու գունազեղ կերպարներով եւ չնաշխարհիկ արեւելեան տեսարաններով:*

Իսկ Կարէն Սիմոնեան կ'աւելցնէ. *Վրեժ-Արմենը մեր դիմաց բացել ու փռել է իրադարձութիւնների մասին յիշողութիւնները եւ ընթերցողը տեսնում է այն գլխաւորը, ինչը բացայայտում է հեղինակային իւրօրինակ արձակի կշռոյթով: Արմատները... Անշո՛ւշտ արմատները... Արմատները ծիլ են տալիս, ճեղքում են տասնամեակների տափանած գետինը, դէպի լոյսն է ձգում ընծիւղը... Որպէսզի դառնայ շիւ, յետոյ՝ դալար մի ծառ... Որպէսզի դառնայ մարդկայինի, հայկականի, հոգեւորի եւ ազատագրութեան գաղափարի հաւատի կաղնին:*

Գեղատիպ ու յիշատակները կենդանացանող լուսանկարներով հարուստ այս հատորը հրատարակուած է Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Գանատայի Շրջանային վարչութեան եւ «Հորիզոն» շաբաթաթերթի հովանաւորութեամբ:

Հատորին գին նշանակուած է 30 տոլար: Առաքման ծախսը՝ յաւելեալ, ըստ երկրի: Նոյն ծրարով առաքուած մէկէ աւելի գրքերու առաքման ծախսը գիրք գլուխ նուազ կ'ըլլայ:

Կազմակերպութիւններու համար, մեծաքանակ ապսպրանքի պարագային՝ յատուկ գեղջ:

Ստանալու համար դիմել Համազգայինի Գանատայի շրջանային վարչութեան՝ info@hamazkayin.ca,
կամ հեղինակին՝ Vrej-Armen Artinian 1 (514) 334-5454, vrejarmen@hotmail.com

